18.11.2026թ
N 02/11/26

Երևանի քաղաքապետ
պարոն Տ. Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան,

Սույն գրությամբ ծանուցում ենք, որ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Բաբաջանյան փ. 1/4 հասցեում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ, որի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն իրականացվում են «ԼՈՒՔ» ՍՊ ընկերության կողմից:

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները և նախատեսվող գործունեությունների դասակարգումները, «ԼՈՒՔ» ՍՊ ընկերության կողմից նախաձեռնվել է վերը նշված նախատեսվող գործունեության նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և փորձաքննության գործընթաց, որի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել 2 հանրային լսումներ:

ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 13-րդ կետի պահանջին համապատասխան ստորև ներկայացվում է 1-ին հանրային լսման ծանուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

1. **Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը.**
«ԼՈՒՔ» ՍՊԸ, հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բն.

2. **Նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.**

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Բաբաջանյան փ. 1/4 հասցեում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26042026-01-0001 վկայականով տրված հողամասի սահմաններում (Հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 01-002-0105-0127, մակերեսը՝ 0.77045 հա):

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ «ք. Երևան, Ավան վարչական շրջանի Բաբաջանյան փ. 1/4 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում»

Ինչպես նշվեց վերևում, սույն տեղեկատվության ծավալը և համառոտ նկարագրի պահանջը սահմանված է ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 13-րդ կետով: Ծրագրի առավել ընդարձակ տարբերակը, նախագծային լուծումները և շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվությունը կներկայացվեն ծրագրի իրականացման հետագա փուլերում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի տարածքում:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք հինգ աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկել ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 14-րդ մասով սահմանված գործողությունները, որի շրջանակներում հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու և ցուցաբերելու մասնագիտական, տեխնիկական և մեթոդական աջակցություն:

Կից ներկայացնում եմ նաև 1-ին հանրային լսումների կազմակերպման համար սահմանված համայնքային տուրքի վճարման անդորրագիրը, առդիր՝ 1 թերթ:

Տնօրեն՝ Տ. Առաքելյան

«ԼՈՒՔ» "LOOK" 00921258